ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆԻՆ

Սեպտեմբերի 18-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ-ում ՌԴ արտակարգ եւ լիազոր դեսպան Վյաչեսլավ Կովալենկոյին:

Ողջունելով նորանշանակ դեսպանին հայոց հոգեւոր կենտրոնում՝ Վեհափառ Հայրապետը հաջողություններ մաղթեց Վ. Կովալենկոյին Հայաստանում իր դիվանագիտական առաքելության ընթացքում՝ հույս հայտնելով, որ նրա պաշտոնավարության շրջանում առավել կսերտանան եւ կամրապնդվեն երկու ժողովուրդների դարավոր բարեկամական կապերը, ինչպես նաեւ համագործակցությունը Մայր Աթոռի եւ դեսպանատան միջեւ: Նորին Սրբությունն անդրադարձավ նաեւ Հայ Առաքելական Եկեղեցու եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցու ջերմ եւ եղբայրական հարաբերություններին, որոնք արդյունավորվում են համատեղ տարաբնույթ ծրագրերով:

ՌԴ դեսպան Վ. Կովալենկոն շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին ջերմ ընդունելության եւ բարեմաղթանքների համար՝ անդրադառնալով հայ-ռուսական կապերին եւ դեսպանատան ապագա ծրագրերին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

«ԳԱՐԵԳԻՆ Ա» ՀՈԳԵՒՈՐ-ԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀՈՂՕՐՀՆԵՔԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Երջանկահիշատակ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի մահվան 10-րդ տարելիցի առիթով, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ, սեպտեմբերի 19-20-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում կանցկացվեն մի շարք միջոցառումներ եւ արարողություններ:

Այս առիթով տարբեր երկրներից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին են ժամանել թեմական առաջնորդներ, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության ներկայացուցիչներ՝ Տ. Նորայր եպիսկոպոս Աշգյանը եւ Տ. Շահե եպիսկոպոս Փանոսյանը, հոգեւոր Գարեգին Ա Հայրապետի ընտանիքի անդամներ եւ Հայոց Եկեղեցու բարերար հայորդիներ:

Սեպտեմբեր 19-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, հանդիսապետությամբ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տեղի ունեցավ Գարեգին Ա Հայրապետի անվան հոգեւոր-կրթական կենտրոնի հողօրհնեքի արարողությունը: Հոգեւոր-կրթական կենտրոնը